Հայաստանի Ուսանողական Ազգային Ասոցիացիա

*Հայեցակարգային փաստաթուղթ*

*ՀՓ 07-2012 առ 20.11.2012*

# «ՈւՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈւՆՔՆԵՐ – ՄԱՐԴՈւ ԻՐԱՎՈւՆՔՆԵՐ»

Երևան 2012

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը և մարդու իրավունքները հասկացություններ են, որոնք ի վերուստ կապված են միմյանց հետ: Առաջին հերթին՝ կրթվելու իրավունքն ինքնին մարդու հիմնական իրավունքներից է: Այս մասնավոր իրավունքը պահանջում է, որպեսզի ուսանողներն ունենան նաև որոշակի այլ իրավունքներ՝ կրթվելու իրավունքն իրականացնելու համար: Երկրորդ հերթին՝ կրթությունը մարդկային բոլոր իրավունքները պաշտպանելու հիմնական միջոցն է:

Որպեսզի ուսանողներն իրականացնեն մարդու կրթվելու իրավունքը, նրանք պետք է ունենան նաև այլ իրավունքներ: Նման անհրաժեշտ իրավունքների օրինակներ են խոսքի ազատության, ապահովվածության և տնտեսական ազատության, քաղաքական և քաղաքացիական իրավունքները, ինչպես նաև սոցիալական անվտանգությանը վերաբերող սոցիալական և մշակութային, աշխատանքային, բնակարանային և առողջապահական խնամքին վերաբերող իրավունքները, որոնք բոլորը սահմանված են Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրով:

Ուսանողները, ինչպես հասարակության մյուս անդամները, ունեն նույն քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները: Օրինակ՝ ուսանողները պետք է ունենան նույն սոցիալական իրավունքները, ինչ ունեն մյուսները, և դրանցում չպետք է ունենան ավելի փոքր մասնաբաժիններ:

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: www.ansa.am, e-mail: secretariat.ansa@gmail.com

# ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Կրթությունն ուղղված է մարդու լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Կրթությունը պետք է նպաստի փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բոլոր ազգերի, էթնիկ կամ կրոնական խմբերի միջև բարեկամությանը, ինչպես նաև Միավորված ազգերի խաղաղության պահպանմանն ուղղված հետագա գործունեությանը: Կրթությունը նպաստում է մարդու՝ հասարակական գործունեությանը ավելի արդյունավետ մասնակցությանը և իր սեփական կարծիքը կազմելու ունակության զարգացմանը: Այն նաև օգնում է անհատներին իրենց ներդրումն ունենալ հասարակության որակի բարձրացման գործում:

Յուրաքանչյուր ոք հավասար իրավունք ունի իրեն հասանելի դարձնելու բարձրագույն կրթության տարրական, հիմնական և մնացած այլ ձևերը:

Միջնակարգ կրթության չափանիշը պետք է լինի այնպիսին, որպեսզի այն ապահովի բարձրագույն կրթության հասանելիությունը: Այստեղ պետք է չլինի որևէ խտրականություն, և բուհերն ու կառավարությունը պետք է ապահովեն հավասար պայմաններ բոլորի համար: Ոչ թե որակավորում ստանալը պետք է լինի բարձրագույն կրթություն ստանալու համար հավասար պայմանների առկայության հիմնական պատճառը, այլ որպես անձ զարգանալու հնարավորությունը:

ՀՈՒՍԱ-ի համոզմամբ վճարովի ուսումը խթանում է բարձրագույն կրթություն ստանալու համար անհավասար պայմանների առաջացումը, և այսպիսով բարձրագույն կրթությունը հասանելի է դառնում

սահմանափակ թվով մարկանց համար, այլ ոչ թե բոլորի: Այսպիսով՝ ՀՈՒԱԱ-ն գտնում է, որ բարձրագույն կրթություն ստանալու հասանելիությունը իրավունք է և այն պետք է լինի հանրային ծառայություն՝ առանց վճարի, հետևաբար նաև ազատ: ՀՈՒԱԱ-ն հայտարարում է, որ անվտանգ աշխատանքային միջավայրը պետք է լինի մարդու հիմնական իրավունքը: Բոլոր ուսանողները պետք է ունենան նրանց ընտրած կրթական ծրագրերի հետ կապված միջոցների, ծառայությունների և ֆինանսական ռեսուրսների հանդեպ իրավունքներ: Այդ միջոցները պետք է տրամադրվեն առանց որևէ ֆիզիկական և կառուցվածքային խոչընդոտի: Անհրաժեշտ է այնպիսի ենթակառուցվածքների առկայությունը, որոնք կխթանեն բոլոր ուսանողների, այդ թվում նաև հաշմանդամների համար հավասար կրթական պայմաններ ստեղծելը: Սա ոչ միայն վերաբերվում է ակներև հաշմանդամներին, այլև նրանց, ովքեր ունեն լսողական, խոսակցական խնդիրներ և այլն: Պետք է համապատասխան կերպով նաև ապահովված լինեն ուսանողների առողջապահական, ֆիզիկական և մտավոր պայմանները: Բուհը պետք է նաև հոգա ուսանողների անվտանգության մասին նրանց ամբողջ ուսանողական գործունեության ընթացքում: Այս առումով բուհերը պետք է համոզված լինեն, որ ուսանողներն ապահովագրված են ամբողջ իրենց ուսման ընթացքում:

Յուրաքանչյուր բուհի նպատակը պետք է լինի իր ուսանողներին տրամադրել որակյալ կրթություն և կրթության համար նախատեսված աշխատանքային միջավայր: Սահմանափակ միջոցները չպետք է խոչընդոտեն ուսանողին կրթություն ստանալ: Դասախոսական կազմի և ուսանողների համար անհրաժեշտ նյութական միջոցները՝ գրքերը, լաբորատորիաները, գրադարանային ռեսուրսներն ու տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ), ևս պետք է շարունակաբար բարելավվեն: Սա պետք է արվի կրթության որակն ապահովելու և բուհերի շրջանակում հավասար հնարավորություններ ապահովելու համար: Կրթության ձևը և բովանդակությունը, այդ թվում՝

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: www.ansa.am, e-mail: secretariat.ansa@gmail.com

դասավանդման մեթոդները և ուսումնական ծրագրերը, պետք է լինեն ուսանողակենտրոն: Այս առումով բուհերի ուսանողները և լիազորները պետք է փոխկապակցված լինեն, որպեսզի ստեղծեն ավելի լավ ուսումնական միջավայր:

Բոլոր ուսանողները պետք է իրավունք ունենան ուսում ստանալ այն լեզուներով, որոնք լայնորեն օգտագործվում են տվյալ երկրի ռեզիդենտների կողմից: Պետք է ամեն ջանք գործադրվի նաև հասարակության բոլոր անդամների համար հասանելիության բազմազանությունը և կրթություն ստանալու փորձը խթանելու համար, և դրանք չպետք է սահմանափակվեն այնպիսի գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են քաղաքական, կրոնական կամ աշխարհայացքային այլ համոզմունքները, ազգությունը, մշակութային ծագումը, սեռը, սոցիալական դիրքը կամ հաշմանդամությունը: Հարկավոր է ամեն ինչ անել բարձրագույն կրթությունում օտարերկրյա ուսանողներին ներգրավելու համար: Պետք է իրականացվեն օտար լեզու դասընթացներ, սակայն, բացի սա անհրաժեշտ են նաև այլ միջոցառումներ: Բարձրագույն կրթության տրամադրողները պետք է պատասխանատու լինեն վերոնշյալ միջոցառումների իրականացման համար, որպեսզի երաշխավորեն ցանկացած մակարդակում կրթության մատչելիություն և փոքրամասնությունների համար:

Կրթությունը պետք է ճկուն լինի, որպեսզի կարողանա հարմարվել փոփոխվող հասարակությունների ու համայնքների պահանջներին, ինչպես նաև արձագանքի ուսանողների տարբերույթ սոցիալական և մշակութային պահանջներին: Բուհերը պետք է նաև վճռորոշ կարծիք արտահայտեն հասարակությունում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ, սակայն չպետք է կարգավորվեն դրանցով:

## ԱՅԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: www.ansa.am, e-mail: secretariat.ansa@gmail.com

ՀՈՒԱԱ-ն այն համոզմանն է, որ ուսանողների տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները կարիք ունեն հետագա զարգացման և ամրապնդման: Այս իրավունքներն անհրաժեշտ են քաղաքական և քաղաքացիական իրավունքները ձևավորելու համար, և, որպես այդպիսին, բարձրագույն կրթությունում ձևավորվել է մի կենսական նշանակություն ունեցող դոկտրին: Այսպիսով, կառավարությունը և միջազգային կազմակերպությունները պետք է կենտրոնանան առավելապես տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների՝ օրինակ ուսման ընթացքում և հետագայում աշխատանքի ազատ և հասանելի ընտրության վրա:

Յուրաքանչյուր կառավարություն պետք է խրախուսի բուհերում լեզուների և մշակույթների բազմազանությունը: Սա հեշտացնում է երկրների միջև ուսանողների շարժունությունը: Նպաստելով այսպիսի շարժունությանը՝ արտասահմանյան ուսանողներին պետք է տրվի նաև կրթության իրավունք: Օտարերկրյա ուսանողներին պետք է թույլատրել նաև մասնակցել և օգտվել ՀՀ-ում իրականացվող սոցիալական աջակցության միջոցառումներից: Սա ներառում է բոլոր բնապրային ծառայությունները՝ առողջապահությունը, սուբսիդավորվող սննդամթերքը, էժան տրանսպորտային ծառայությունները և այլն: Տեղի ուսանողներին սրանք կարող են չտրամադրվել, քանի որ նրանց կարող են հատկացվել սոցիալական դրամաշնորհներ: Այս դեպքում դա արվում է տեղական կառավարության կողմից: Ուսանողներին տրամադրվող բոլոր տեսակի սոցիալական աջակցությունները պետք է փոխանցելի լինեն նաև արտասահմանում: Բացի այդ, օտարերկրյա ուսանողներն աշխատանքային օրենսդրության, կրթության և այլ իրավունքների ոլորտներում պետք է ունենան նույն իրավունքները, ինչը ունեն հայաստանցի ուսանողները: ՀՈՒԱԱ-ն պահանջում է ինչպես քաղաքական և քաղաքացիական իրավունքների, այնպես էլ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կատարում ազգային և միջազգային մակարդակներում: Այսպիսով, ՀՈՒԱԱ-ն պահանջում է նաև, որպեսզի

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: www.ansa.am, e-mail: secretariat.ansa@gmail.com

վերոնշյալ իրավունքների ոտնահարման դեպքում անհատներն ապահովված լինեն իրենց իրավունքները պաշտպանելու և վերականգնելու անհրաժեշտ միջոցառումներով:

## ԱՅԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ուսանողները և ուսանողական միություններն ունեն խոսքի ազատության իրավունք: Բուհերն ազատ արտահայտվելու նպաստող կարևոր ամբիոններ են: Այս իրավունքը ներառում է ազատ կարծիք կազմելու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու իրավունքը` առանց որևէ մեկի միջամտության: Սա նշանակում է, որ ոչ ոք իրավունք չունի արգելել ուսանողներին և ուսանողական միություններին արտահայտելու իրենց տեսակետները: ՀՈՒՍԱ-ն նաև առաջ է բերում հավաքներ կազմակերպելու և գործադուլներ հայտարարելու իրավունքները` ՀՀ օրենսդրության չհակասող դրույթների համատեքստում:

Ուսանողական միությունները պետք է զերծ լինեն արտաքին շահարկումներից և միջամտություններից, որոնք կարող են լինել նաև բուհերի կողմից: Դա ուսանողների և ուսանողական միությունների իրավունքն է ունենալ իրենց սեփական որոշումները կայացնելու ազատություն` առանց անցանկալի միջամտության:

Բուհերը և այլ հաստատությունները պահպանում են ուսանողների ակադեմիական և անհատական առաջընթացին վերաբերող փաստաթղթերը, և ուսանողները պետք է կարողանան ազատ օգտվել այդ փաստաթղթերից:

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ուսանողները բուհական համայնքի կարևոր և անբաժանելի մասն են: Ուսանողները պետք է լինեն բուհի հետաքրքրությունների կենտրոնում գտնվող նրանց հիմնական գործընկերները: Ուսանողների

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: www.ansa.am, e-mail: secretariat.ansa@gmail.com

ներկայացուցիչները բուհում պետք է ընտրվեն ժողովրդավարական ճանապարհով և ուսանողների կողմից:

Ուսանողներն իրավունք ունեն հավասար մասնակցություն ունենալ որոշումների կայացման գործընթացի բոլոր մակարդակներում: Ինստիտուցիոնալ մակարդակում, ուսանողները պետք է իրավունք ունենան մասնակցելու որոշումների կայացմանը, որպես հավասար գործընկերներ՝ բոլոր հարցերի շուրջ: Այս իրավունքը օրենքով ամրագրելուց բացի անհրաժեշտ է պաշտպանել և կիրառել: Ազգային և միջազգային մակարդակներում ուսանողները պետք է իրավունք ունենան մասնակցելու իրենց կրթության ու ուսանողական ապահովության վերաբերող որոշումների նախապատրաստմանը, իրականացմանն ու գնահատմանը:

Կրթության և մասնագիտական բարձրագույն կրթության նպատակներից մեկն ակտիվ, քննադատող և կառուցողական քաղաքացիների մասնակցության խրախուսումն է: Ժողովրդավարական ակադեմիական համայնքները և ուսանողական կազմակերպությունները վերոնշյալն իրականացնող հիմնական գործիքներն են: Հետևաբար, բուհերի անձնակազմի, ուսանողների և ուսանողական կազմակերպությունների միջև ժողովրդավարական փոխհարաբերությունները մեծ ազդեցություն ունեն իդեալական ժողովրդավարություն ստեղծելու հարցում, որն ավելին է, քան պարզապես այս բոլոր կազմակերպությունները կառավարող համակարգ:

Բուհերի գործունեությանը մասնակցելու իրավունքը վերաբերում է այդ համակարգի բոլոր անդամներին՝ պրոֆեսորադասախոսական կազմին, այլ աշխատակիցներին և ուսանողներին: Լավ կառավարման համակարգ ապահովելու համար անհրաժեշտ է մշակել ժողովրդավարության հիմնական միջոցները: Վերոնշյալ հիմնական միջոցները ներառում են տեղեկատվության հասանելիությունը, լրատվամիջոցներից տեղեկատվության ազատ և արդյունավետ հոսքը և կառավարման թափանցիկությունը:

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: www.ansa.am, e-mail: secretariat.ansa@gmail.com

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսանողական միությունները պատասխանատու են ուսանողների և պոտենցիալ ուսանողների կրթական և սոցիալական իրավունքներն ապահովելու համար: Որպեսզի այդ իրավունքներն ուսանողները կիրառեն ու հետևեն դրանց, անհրաժեշտ է, որպեսզի ուսանողական միությունները ճանաչվեն օրենքով, և իրավասություն ունենան դատարանում ներկայանալ ուսանողների անունից:

Ուսանողական միությունների ներկայացուցչությունները պետք է լինեն ժողովրդավարական և թափանցիկ, որպեսզի անհատ ուսանողները կարողանան իրացնել իրենց իրավունքները և մասնակցել դրա շրջանակներում իրականցվող գործընթացներին և ծրագրերին: Ուսանողական միություններն անհատ ուսանողների համար հիմնարար դերակատարներ են համարվում՝ բուհերում որոշումների կայացմանը մասնակցելու տեսանկյունից:

Ուսանողական միությունները պարտավոր են ծնել և սերմանել իրենց գործունեության մշակույթն իրենց ուսանողների շարքերում: Սա կարևոր է ոչ միայն ուսանողական իրականության վրա հիմնված օրինական որոշումների ընդունման համար, այլ և ուսանողների ակտիվ, քննադատական և կառուցողական մասնակցության մշակույթը խթանելու համար: Ուսանողական միությունները պետք է նաև խթանեն ուսանողների իրազեկվածությունն իրենց իրավունքների մասին:

Ուսանողական միությունները պետք է գործեն համախմբված ազգային և միջազգային մակարդակներում: Համախմբվածությունը օգնություն է, որը պետք է տրվի անհատներին և ուսանողների խմբերին ուսանողների և մարդկային իրավունքների ցանկացած խախտման և ճնշման դեպքում: Ուսանողական կազմակերպությունները պետք է մտահոգված լինեն այդ ճնշումներն ու խախտումները կանխելով:

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.

URL: *www.ansa.am*, e-mail: *secretariat.ansa@gmail.com*

Համախմբվածությունը հիմնված է փոխադարձ հարգանքի, կարիքներ և պահանջներ ունեցողներին համապատասխան հնարավորություն տալու վրա: Այս առումով, համախմբվածությունը պետք է լինի ուսանողների և՛ իրավունքը, և՛ պարտականությունը: Ակներն է, որ անհրաժեշտություն կա եվրոպական և միջազգային մակարդակներում համերաշխության ցանցի ստեղծման: Այն պետք է հիմնված լինի տեղեկատվության փոխանակման և տարբեր ծրագրերի ու քարոզչության մասին ունեցած պլանների վրա:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան համոզված է, որ մարդու իրավունքներն ուսանողական իրավունքներ են: Իրավունքը բարոյական արժեք է, ավելին քան ցանկություն կամ պահանջ, որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա: Իրավունքն ինչ որ իր չէ, որ մարդիկ կարողանան ձեռք բերել կամ կորցնել: Այս իրավունքների խախտումները վերաբերում են ինչպես ուսանողներին, այնպես էլ այլ անհատներին: Հետևաբար, ուսանողները և ուսանողական կազմակերպությունները պետք է պաշտպանեն մարդու իրավունքները և հաղթահարեն ցանկացած խոչընդոտ՝ այն պաշտպանելու համար:

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: www.ansa.am, e-mail: secretariat.ansa@gmail.com